

դեմոկրատիան Արտաշատ քաղաքի որսալ կինճս եւ իշափայրիս գահամբք Գինայ», ընկնում է մի խորխորատի մէջ, ու կորչում իր ձիով:

Գին կամ Գինայ գետի ակունքները «յԱ- գասն ի վեր ի Մասիս» չէին, այլ լանջամօտ ստորոտին: Արտաւազդ գնում էր որսի Արտաշատից դէպի Մասիս: Նրան քաջքերը բռնում են իր սրատեղում. այսինքն՝ Մասիսի ստորոտում եւ տանում են վեր, Մասիս:

Այսպիսով «տարցին» բառի մէջ խտացած է հին զրոյցը Արտաւազդի մասին: Այդ մի հատիկ բառը շարժում է մտցնում երգչի յօրինած պատկերի մէջ:

Արտաշէսն ասում է.

«Քաջքերը քեզ պիտի բռնեն (վարը) եւ պիտի տանեն (վեր), ուր ասպրում են իրանք», եւ յարում է. «այնտեղ պիտի մնաս եւ լոյս չտեսնես»:

Զարհուրելի է հօր անէծքը. «քաջքերը քեզ պիտի բռնեն, ասում է. պիտի տանեն վեր, Մասիս, դու այնտեղ (այսինքն վերը) պիտի մնաս, բայց պէտք է լոյս չտեսնես. պիտի լոյս չտեսնես ա՛յն բարձունքի վրայ, որ ամենից առաջ է տեսնում լոյսի ծագումը եւ ամենից ուշ է զրկւում նրա շողերից:

Մինչդեռ առաջարկած ուղղումով այնպէս է դուրս գալիս, թէ «քեզ պիտի բռնեն վերն Ազատ Մասիսում եւ պէտք է լոյս չտեսնես»: Արտաւազդը կարիք չունէր Մասիսն ի վեր բարձրանալու, որ փորձանքի պատահէր եւ քաջքերից բռնուէր: Նրա որոնած կինճսն ու իշափայրին ասպրում էին Մասիսի ստորոտում եւ Արաքսի շամբուտներում: Մինչեւ այսօր, թէեւ իշափայրին չքացել է, բայց կինճները դեռ ասպրում են Մասիսի ստորոտին, Շարուրի դաշտում, Արաքսի շամբերի մէջ:

Այսպիսով յայտւած «տարցին» եւ «անդ կացցես» բառերը ընազրի անբաժան մասն են եւ մեծ արժէք ունին: Նկատենք նաեւ, որ ձեռագիրները որեւէ հիմք չեն տալիս այդ հատուածը փոփոխելու համար (տես Սորենացի, 1913, էջ 192, ծանօթ):

* * *

Լ. Գրէյի հետեւեալ յայտւումը ազճատում է Վարդգէսի երգը: Իր ունեցած բնագիրի մէջ նոր կարգում է.

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն զՔասաղ գետով եկեալ նստեալ զԾրէչ բլրով զԱարտիմէդ քաղաքաւ զՔասաղ գետով Կռել կոփել զըռուռն Երուանդայ արքայի. Առաջարկում է տրոհել ու կարգաւ այսպէս.

Հատուած գընացեալ Վարդգէս մանուկըն ի Տուհացը գաւառէն զըՔասաղը գետով նստեալ զըԾրէչ բլրով զԱարտիմէդ քաղաքաւ Կըռել կոփել զըըռուըռն Երուանդայ արքայի.

Ուրեմն փոխանակ ասելու. «եկեալ նստեալ», առաջարկում է պարզապէս կարգաւ. «նստեալ»: Առաջարկում է նաեւ յայտւել «զՔասաղ գետով» տողի կրկնութիւնը:

Այս առաջարկներից առաջինը կարող էր ձեռագրական հիմք ունենալ, եթէ վերաբերէր «նստեալ» բառին, քանի որ Սորենացու եօթ ձեռագիրը չունին այդ բառը (տես էջ 199, ծանօթ.):

Բայց հակառակի պէս նա առաջարկում է յայտւել «եկեալ» բառը, որ կայ բոլոր ձեռագիրների մէջ:

Գալով երկրորդ առաջարկին՝ նա կարող է ձեռագրական հիմք ունենալ, քանի որ հինգ ձեռագիրը չեն կրկնում «զՔասաղ գետով» բառերը: Բայց Սորենացու ամենից արժէքաւոր ձեռագիրները (Տպագրի օրինակներ, Անտիպիներ եւ Սառն օրինակը) այս կրկնութիւնն ունին. հետեւապէս պէտք է կրկնութիւնը համարել նախնական: Բացի այս՝ նոր հրատարակութեան մէջ ոչ թէ «եկեալ նստեալ» է, այլ «եկեալ նստաւ», որ աւելի ուղիղ պէտք է համարել, քանի որ դա ասելու մի ձեւ է, որ դեռ ասպրում է մեր կենդանի լեզուի մէջ. «եկաւ նստեց» ասում է ժողովուրդը:

Գալով «զՔասաղ գետով» բառերի կրկնութեան՝ պէտք է ասեմ, որ վիպական յօրինուածքի յատուկ ոճն է դա, որով շեշտում է խօսքի մի մասը:

Այդ կրկնութիւնը յայտւելով՝ մենք ազճատում ենք երգի վիպական կերպարանքը: